

ԴԱՍՏ.—Տարակոյսչկայ թէ ատկէ արդար բան չէր կրնար ըլլալ. բայց ատ բանդ ալ առանց օրինաց հպատակելու չըլլար. մանաւանդ թէ ան աւտեն աւելի կապերու տակ կ'իյնան մարդիկ՝ քան թէ զատ զատ աշխատելով. վասն զի պէտք է որ ան բազմութեան մէջ մէկ գլխաւոր մըն ալ ըլլայ որ ամենուն աշխատանքը որոշէ ու զիրենք կառավարէ: Ինչէ զատ, որովհետեւ ծոյն ու աշխատասէրը, շուայն ու չափաւորը հաւասար բաժին առնելու կ'ըլլան, շատ աշխատողը քիչ կը վաստակի, քիչ աշխատողը շատ: Ինոր համար ինծի կ'երեւայ թէ լաւ է որ ամէն մարդ իր բաներուն ինքը խառնուի՝ որչափ որ կարելի է: Իսկ թէ ինչ ճար ընելու է որ ամէն մարդ առանց ուրիշի վնաս ընելու՝ իր իրաւունքը և ստացուածքը ձեռքէ չհանէ ու հարըստնայ, ուրիշ անգամ կը խօսինք:

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Երբեք պարարտացնելու նոր նիւթ:

ՓԱՐԻԶՈՒ Պիտութեանց ճեմարանին մէջ յուլիսի 8^{էն} նոր գիւտ մը առաջարկուեցաւ՝ խիստ օգտակար անոնց որ երկիր ունին կամ կը բանեցընեն: Շաթէնման՝ անունով պարոնը փորձեր տեսեր է որ օշակով՝ բազադրուած ջուրը շատ աղէկ պարարտութիւն կուտայ արտերուն. ինքը իմացուցեր է ճեմարանին՝ թէ ան կը տոր տեղէն որ անցեալ տարի օշակաջրով ոռոգեր է եղեր՝ աս տարի կրկին առատութեամբ հնձեր է խոտը՝ քան թէ ուրիշ տեղերէն որ ան ջրով ոռոգուած չէն եղեր. և յոյս ունի որ երրորդ տարին ալ նոյն յաջողութիւնն ունենայ:

1 Chattenmann.

2 Գլ. Sel ammoniac. ՅՃ. Կիւրբը:

Շաթէնմանին խօսքին նայելով, չորս հարիւր քիլոկրամ հասարակ օշակը մէկ հեկտար երկրի մը իրեք տարի կը բաւէ. որ ըսել է՝ գրեթէ 312 օխան 149 ու կէս քառակուսի կանգուն գետնի: Եւ որովհետեւ այնչափ օշակին գինն է գրեթէ 240 Ֆռանք, տարեկան ծախքը 80 Ֆռանք, երբոր ենթադրենք թէ պարոն Շաթէնմանին ըսածին պէս՝ երկրին բերքը կրկին պիտի ըլլայ, հաւանական է թէ երկրագործը հարիւր քսան Ֆռանք աւելի վաստակ պիտի ընէ ամէն մէկ հեկտարի տեղին վրայ:

Սիլբեռնի երկրագործութեան:

ԺԷ.

Նախորդի նման Բոյսերը ճշտելու վրայ:

Հ. Ինչ է ճակնդեղը.

Պ. Իսկայ խոշոր ու մսոտ արմատ ունեցող բոյսերէն է, որ չէ թէ միայն մարդկանց ու անասնոց ուտելիքի տեղ կը գործածուի, հապա նաև առատ շաքար ալ կը հանուի անկէ:

Հ. Որ հողերը աւելի կը յարմարին ճակնդեղի:

Պ. Ճակնդեղը կ'ուզէ թեթեւ ու աղէկ հերկած ու աղբոտած կակուղ հող. հիւսիսային կողմերը աւելի աղէկ առաջ կուգայ, բայց երկարատեւ չորութենէ կը վնասուի:

Հ. Ճակնդեղը երբ կը ցանուի.

Պ. Իպրիլի սկիզբները կը ցանեն սովորաբար սփռելով. բայց աւելի աղէկ է կարգ կարգ ափսներու մէջ ցանելը. ափսները պէտք է որ մէկմէկէ 18^{էն} ինչուան 27 բթաչափ հեռու ըլլան: Եթէ մէկ ոտնաչափ մէկմէկէ հեռու թաղելու է իրեք չորս հունտ մէկ տեղ:

Հ. Ինչ հոգ ընելու է վրան.

Պ. Ընելու հոգը աս է որ ստէպ

ստեպ գէշ խոտերը խլուին :

Հ. Վաղելու ատենը որն է .

Պ. Սեպտեմբերի կամ հոկտեմբերի մէջ խլելու է . տերւները անասուններուն տալու , իսկ արմատները փոսերու մէջ պահելու է : Որոնք որ աւելի առաջ մշակուած են՝ անոնց շաքարը աւելի առատ կ'ըլլայ :

Հ. Որոնք են ան բոյսերը որ իրենց արմատին խոշոր ու մսոտ ըլլալուն համար մեծ արտերու մէջ կը մշակուին .

Պ. Շողգամ, ստեպղին՝, գազար՝, և ասորնք քիչ մը խոնաւ կլիմաներու մէջ լաւ առաջ կուգան :

Հ. Ի՞նչ կերպով կը մշակուին .

Պ. Ինչ կերպ որ զուրցեցինք գետնախնձորին ու ճակնդեղին համար : Յայտնի է որ աս տեսակ բոյսերուն հարկաւոր է աղէկ հերկած կակուղ հող, ու առատ աղբ . բայց ան տեսակներուն՝ որոնց արմատէն շաքար կը հանուի , աղէկ չէ շատ կենդանական աղբ տալը . աւելի կը յարմարի բուսական ու հողային պարարտութեան հետ խառնուածը :

ԺԸ .

Կաղամբ՝ մշակելու վրայ :

Հ. Կաղամբը երբ կը ցանեն .

Պ. Իսիկայ որոշ ատեն մը չունի . թէ որ ուղեւ մարտի ու ապրիլի հասցընել, պէտք է նախընթաց տարւոյն յունիս ամսուն մէջ ցանես . իսկ թէ որ կ'ուղեւ նոյեմբեր ու յունուար ամիսներուն մէջ կաղամբ ունենալ, պէտք է մարտի կամ ապրիլի մէջ տնկես :

Հ. Հողը ի՞նչպէս պատրաստելու է .

Պ. Ի՞նչ տը հնձելէն ետքը մէկէն՝ ի մէկ իրեք ոտնաչափ լայնութեամբ ակօսներ կը բանաս , և այնպէս կը թողուս որ բոլոր ձմեռուան մէջ հողը կակըղնայ . մարտին ակօսներուն մէջ

աղբ կը դնես ու արօրով հողը վրան կը ծածկես . ետքը ան աղբոտած հողին վրայ իրեք իրեք ոտնաչափ հեռու հունտերը կը ցանես : Կաղամբը շատ կը գործածուի ձմեռուան մէջ անասունները գիրցընելու համար . միջակ մեծութեամբ ցուլ մը տասուերկու ժամուան մէջ 50 լիպրէ կաղամբ կ'ուտէ . իսկ ոչխարը 5 կամ 6 լիպրէ՝ նոյնչափ ատենի մէջ :

Հ. Վայրի կաղամբը ի՞նչպէս կը մշակեն .

Պ. Երկու տեսակ վայրի կաղամբ կայ . ձմեռուան ու ամառուան . ձմեռուանը աւելի առատ է , ու քիչ անգամ կը փճանայ . ասոր հողը պէտք է կակուղ ու աղէկ աղբոտած ըլլայ . վասն զի աս բոյսը իր սնունդը գետնէն կ'առնէ . յունիսի մէջ սփռելով կը ցանուի , բայց ալ աղէկ է սերմնացան գործիքով ակօսի մէջ կարգաւ ցանելը : Երբոր հողը կարծրանայ , պէտք է ձմեռուին առաջ հողը մէյմը կակըղցընել : Եարնան թեթեւ կերպով մը հերկելու է , որպէս զի գէշ խոտերը խլուին ու հողը զովանայ : Երբոր յունիսի կամ յուլիսի մէջ հունտը սենայ ու վրայի կեղւնները դեղնին , պէտք է քաղել :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Կոյրերու և հոգանոցներու վրայ ԳԵՂԵՒՈՒԹԻՒՆ :

ԴժԲԱՂԴԷ ան մարդը որ կոյր ծնած է . արարածոց մէջ ամենէն անկատարը կրնայ սեպուիլ, վասն զի չկրնար իր առջևի գեղեցկութիւնը ըմբռնել, չկրնար իմանալ աշխարհիս բոլոր հրաշալիքը , և ինչպէս որ Փիւիսոյ անունով կոյրը կ'ըսէր՝ կարծես թէ մէկ մութ այրի մը մէջ կը բնակի : Եւ այն աւելի թշուառ է անիկայ որ ա-

1 Հասուն :

2 Հիւսիս :

3 Կանա :